ISSN 0002-306X. Изв. НАН РА и ГИУА. Сер. ТН. 2011. Т. LXIV, № 1.

ՈՍՏԱՆԻԿ ԶԱՎԵՆԻ ՄԱՐՈՒԽՅԱՆ

ՀՈԲԵԼՅԱՆԻ ԱՌԹԻՎ

Լրացավ հանրապետության կրթական և պետական ոլորտների ճանաչված գործիչ, էներգետիկայի բնագավառի անվանի մասնագետ, Հայաստանի պետական ճարտարագիտական համալսարանի ռեկտոր, պրոֆեսոր **Ոստանիկ Զավենի Մարուխյանի 65**-ամյակը:

Ոստանիկ Մարուխյանի գիտակցական ողջ գործունեությունն անխզելիորեն կապված է Հայաստանի պետական ճարտարագիտական համալսարանի (նախկին Պոլիտեխնիկական ինստիտուտի) հետ, որտեղ ուսանողական նստարանից անմիջապես հետո անցնելով դասախոսական և ղեկավարի աշխատանքի բարեխիղճ ու երկարատև ճանապարհ՝ հասել է ռեկտորի պաշտոնին:

Ո. Զ. Մարուխյանը Հայաստանում բարձրագույն կրթության բարեփոխումների ակտիվ նախաձեռնողներից է: Լինելով ՀՊՃՀ ուսումնական աշխատանքների գծով երկարամյա պրոռեկտոր, այնուհետև՝ ռեկտոր, իր անմիջական ղեկավարությամբ ու մասնակցությամբ մշակել է ոլորտի նորմատիվ փաստաթղթերի փաթեթներ՝ ուղղված բարձրագույն մասնագիտական կրթության բազմաստիճան համակարգի ներդրման գործընթացի կազմակերպմանն ու կարգավորմանը:

Մարուխյան-մասնագետի անմիջական ջանքերով ՀՊՃՀ (Պոլիտեխնիկ)-ում ներդրվել է մասնագիտական նոր ուղղություն՝ «Շրջակա միջավայրի պաշտպանություն էներգետիկայի ճյուղում», և այսօր էներգետիկական ֆակուլտետում նրա կողմից ղեկավարվող կրթական երեք ծրագրերով (բակալավրատ, մագիստրատուրա, ասպիրանտուրա) իրականացվում են գիտակրթական գործառույթներ և պետբյուջետային ֆինանսավորմամբ գիտահետազոտական թեմաներ ու

պայմանագրային աշխատանքներ: ԱՄՆ-ի էներգետիկայի դեպարտամենտի հետ Ռ.Զ. Մարուխյանի նախաձեռնած համագործակցային փոխհարաբերությունները տվել են ցանկալի արդյունք. ամբիոնին կից, որը ղեկավարում է Ռ. Մարուխյանը, ստեղծվել է Միջուկային անվտանգության տարածաշրջանային կենտրոնը, իսկ ներդրված արդիական սարքավորումներն ու գործիքամիջոցները էապես բարելավել են մի քանի մասնագիտությունների գծով ուսումնառության կազմակերպման գործընթացը, նպաստել գիտամեթոդական և հետազոտական մշակումների ընդլայնմանը:

Ընդգրկուն է Մարուխյանի գիտահետազոտական աշխատանքների ոլորտը, որը ներառում է ժամանակակից ՋԷԿ-երի և ԱԷԿ-ների շահագործման, աշխատանքային ռեժիմների օպտիմալացման, բնապահպանական տեսանկյունից դրանք հնարավորինս անվտանգ դարձնելու հիմնախնդիրների մի ամբողջ շարքացանկ: Այդ հետազոտություններն արտացոլված են Մարուխյանի շուրջ 115 գիտական աշխատություններում, ՀՀ Կրթության և գիտության նախարարության կողմից բուհական համակարգի համար երաշխավորված 3 դասագրքերում, 20-ից ավելի ուսումնական ձեռնարկներում (որոնց համար մեկ անգամ չէ, որ նա արժանացել է ՀՊՃՀ (Պոլտեխնիկ)-ի ամենամյա գիտական մրցույթների առաջին մրցանակին) և գիտամեթոդական ուղեցույցներում, ինչպես նաև հանրապետական ու արտասահմանյան տարաբնույթ համաժողովներում ունեցած զեկույցներում, պետբյուջետային և դրամաշնորհային աշխատանքների հաշվետվական նյութերում: Այդ աշխատանքների արդյունքները գործնական կիրառությունն են գտել և հաջողությամբ ներդրվել ՀՀ էներգահամակարգի ջերմային և ատոմային էլեկտրակայանների շահագործման գործընթացներում՝ նպաստելով էներգետիկական տեղակայանքների հիմնական և օժանդակ սարքավորումների արդյունավետության բարձրացմանը:

Հմուտ մանկավարժի գիտական մտահղացումներն իրենց շարունակությունն են գտնում և ամրագրվում նրա կողմից ղեկավարվող մեծ թվով թեկնածուական և մագիստրոսական ատենախոսություններում: Գիտական աստիճան ձեռք բերած նրա սաներն ու ասպիրանտները հանրապետությունում ճանաչված մասնագետներ են և զբաղեցնում են ղեկավար պաշտոններ ինչպես բուհական համակարգում, այնպես էլ էներգետիկայի բնագավառի ձեռնարկություններում:

Այսօր էլ Մարուխյանն իր գիտական ներուժը հաջողությամբ գործադրում է ՀՊՃՀ (Պոլիտեխնիկ)-ում գործող 038 մասնագիտական խորհրդում՝ որպես անդամ, Ատոմային էներգիայի միջազգային գործակալությունում՝ որպես փորձագետ, ՀՀ ինժեներական ակադեմիայի նախագահության կազմում՝ որպես անդամ:

Լինելով քաջահմուտ գիտական խմբագրման և հրատարակչական գործընթացներում՝ Ռ. Մարուխյանն իր նպաստն է բերում նաև գիտական մի շարք հանդեսների խմբագրակազմերի աշխատանքին՝ որպես ՀՀ ԳԱԱ և ՀՊՃՀ (Պոլիտեխնիկ) համատեղ Տեղեկագրի «Տեխնիկական սերիա» ամսագրի, «Էկոնոմիկա» հանդեսի, ՀՊՃՀ (Պոլիտեխնիկ)-ի Լրաբեր և Բանբեր («Մոդելավորում, օպտիմալացում և կառավարում») գիտամեթոդական հոդվածների ժողովածուների խմբագրական կոլեգիաների անդամ:

Ռ. Մարուխյանը պետական և հասարակական-քաղաքական ճանաչված գործիչ է: Կառավարման ու օրենսդրական բնույթի հարցերի լուծմանը մասնակցություն ունենալու նրա կարողությունները և համակարգված մոտեցումները լավագույնս դրսևորվեցին 1999-ին պետական ծառայության մեջ՝ ՀՀ Կրթության և գիտության առաջին փոխնախարարի պաշտոնում և 2003-2004 թթ. հասարակական-քաղաքական ոլորտում, երբ ՀՀ Ազգային ժողովի պատգամավոր էր: Որպես ԱԺ

մշտական և եվրոպական կառույցներին ինտեգրվելու հարցերով ժամանակավոր հանձնաժողովների անդամ՝ Ռ. Մարուխյանը հանդես է եկել օրենսդրական 20-ից ավելի նախաձեռնություններով, ակտիվորեն մասնակցել է ՀՀ Սահմանադրության բարեփոխումների նախագծի մշակմանը:

Ռ. Մարուխյանի՝ գիտակրթական, ուսումնակազմակերպչական, պետական-հասարակական ոլորտներում ունեցած պատկառելի վաստակը նշանավորված է □Անանիա Շիրակացի□ մեդալով, ՀՀ Կրթության և գիտության նախարարության ոսկե հուշամեդալով, ՀՀ Ճարտարագիտական ակադեմիայի ոսկե և արծաթե մեդալներով, մի շարք պատվոգրերով և շնորհակալագրերով:

Կրթական-հասարակական ոլորտների բազմահմուտ գործիչը, իր բնագավառի ճանաչված գիտնականը և խորապես հայեցի նկարագրով օժտված մտավորականն այսօր էլ գիտամանկավարժական և կազմակերպչական ունակությունների բարձունքում է, անխոնջ եռանդով իր ավանդն է ներդնում Հայաստանում տեխնոլոգիական կրթության զարգացման գործին՝ ի շահ Հայաստանի պետական ճարտարագիտական համալսարանի բարգավաճման:

*Խմբագրական կոլեգիան շնորհավորում է **Ստանիկ Զավենի Մարուխյանին** հոբելյանի կապակցությամբ, ցանկանում քաջառողջություն, երկարակեցություն և ստեղծագործական նորանոր հաջողություններ:*